

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, 2014 թվականի ընթացքում իրականացրել է գործունեություն ելնելով բնագավառի հեռանկարային զարգացման ծրագրերից, ՀՀ Նախագահի կարգադրություններից և հրամանագրերից, ՀՀ կառավարության որոշումներից, ՀՀ 2014 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերից և դրանցից բխող նախարարության 2014 թվականի աշխատանքային ծրագրով ամրագրված հիմնախնդիրներից:

ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 777-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերից բխող և ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը ՀՀ քաղաքաշինության նախարարության 2015 թվականի հունվարի 15-ի 01/16.1/52-15 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ, ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ԵՎ ՏԱՐԲԵՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐՈՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ

I. ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1. 2014 թվականի դեկտեմբերի 16-ի N 01/11/6471-14 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը :

2. 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N01/15.1/5424-14 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

3. «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող օրենքների նախագծերի փաթեթը լրամշակվել է ՀՀ վարչապետի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N02/24.12/20859-14 հանձնարարականի շրջանակներում և պատրաստ է ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու համար:

4. Մշակվել է «Ճարտարապետական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկայումս սահմանված կարգով դրվել է շրջանառության:

5. ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N1503-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի N814-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

6. ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի N 1193-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

7. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ի N 38 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից մշակված՝ 2016 թվականին կայանալիք ՄԱԿ-ի բնակարանային տնտեսության և կայուն քաղաքային զարգացման 3-րդ համաժողովին («Հաբիտատ-III») ներկայացվելիք ՀՀ ազգային զեկույցը:

8. ՀՀ վարչապետի 2014 թվականի սեպտեմբերի 29-ի N 943-Ա որոշման համաձայն, նախարարության բնակարանային քաղաքականության վարչության հետ համատեղ, ՄԱԿ ԵՏՀ-ի և այլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ սկսվել է Հայաստանի քաղաքների պլանավորման և կայուն բնակարանային տնտեսության ազգային կարողությունների զարգացման ծրագիրը, որի շրջանակներում մշակվելու է երկրի նկարագիրը (Country Profile) և «Խելացի քաղաքային լուծումներ անցումային և զարգացող երկրների համար» ծրագրով՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի համար «Խելացի քաղաք» պիլոտային ծրագիրը:

9. ՀՀ վարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 1147-Ա որոշմամբ «Հետ-Ռիո+20» զեկույցի նախապատրաստման նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի կազմում ձևավորված ենթահանձնաժողովի կողմից մշակվել է «Կայուն քաղաքներ/կանաչ ճարտարապետություն» բաժնի հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը:

10. Մասնակցություն է ցուցաբերվել Եվրոպայի խորհրդի քարտուղարության կողմից «Եվրոպայի մայրցամաքում տարածական պլանավորման ոլորտում հանրային մասնակցության դերի և նշանակության վերաբերյալ» և «Եվրոպայի խորհրդում CEMAT-ի դերի վերաբերյալ» թեմաներով բանաձևերի մշակմանն ու ընդունմանը: Բանաձևերն ընդունվել են 2014 թվականին հունիսի 16-18-ը Հունաստանում կայացած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների տարածական պլանավորման համար պատասխանատու նախարարների 16-րդ կոնֆերանսին (CEMAT) և Ավագ պաշտոնյաների կոմիտեի (CSO) 97-րդ նիստին:

11. ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով համայնքների ավագանիների հաստատմանն են ներկայացվել ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի, ՀՀ 12 գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի նախագծեր և մի շարք համայնքների գլխավոր հատակագծերի փոփոխություններ, 16 համայնքների գլխավոր հատակագծերի նախագծեր քննարկվել և լրամշակման են վերադարձվել, իսկ 8 համայնքների գլխավոր հատակագծերի լրամշակված առաջադրանքների նախագծերն ուղարկվել են համայնքների ղեկավարներին՝ գնման գործընթացները կազմակերպելու նպատակով:

12. Մշակվել և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի օգոստոսի 29-ի N229 հրամանով հաստատվել ու կիրառման են ընդունել փոքր և միջին ձեռնարկությունների ենթակառուցվածքի օբյեկտների (պահեստների, ջերմատների, գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամասերի, սառնարանային տնտեսության օբյեկտների և չորանոցների) օրինակելի նախագծերի կատալոգը և ձեռնարկը: Նշված օբյեկտների նախագծերը և կառուցման խոշորացված արժեքների հաշվարկը տեղադրվել են նախարարության կայքում և տրամադրվել ՀՀ մարզպետարաններին և քաղաքային համայնքներին:

13. Կազմակերպվել և անցկացվել են «Երևանյան ճարտարապետական բիենալե-2014» համահայկական մրցույթ-ցուցահանդեսը և «Հայկական տուն» ճարտարապետական մրցույթը:

14. Մի շարք միջոցառումներ են իրականացվում կառուցապատման ներդրումային ծրագրերի առարկայական իրագործման ուղղությամբ, ինչը նախարարության համար գնահատվում է որպես նոր գործառույթների համախումբ: Մասնավորապես, ընդունվել է ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N1227-Ա որոշումը՝ «Հին Երևան» ծրագրի կառուցապատման նախապատրաստական միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի արձանագրային որոշման հիման վրա կառավարության անունից լիազորված՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի և «Մուլտիկոնտինենտալ Դիստրիբյուշն» ընկերության միջև ստորագրվել է «Հին Երևան» կառուցապատման ներդրումային ծրագրի իրագործման վերաբերյալ: Աշխատանքներ են տարվել նաև Երևանի 30-րդ թաղամասի /Ֆիրդուսի/ էսքիզային նախագծի մշակման ուղղությամբ:

II. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՈԼՈՐՏ

ՀՀ կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների 49-րդ կետի համաձայն մշակվել է «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N1504-Ն որոշմամբ:

Որոշմամբ հաստատվել են պետական միջոցների (պետական բյուջե, բյուջետային վարկեր և փոխատվություններ) հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայող և էներգաարդյունավետ միջոցառումների կիրառման ենթակա հետևյալ պահանջները՝

-պատող կոնստրուկցիաների (արտաքին պատերի, նախամուտքերի, տանիքների, նկուղների) ջերմամեկուսացում և հնարավոր նվազագույն մակերեսներ ապահովող ծավալահատակագծային լուծումների կիրառում.

-պատերի արտաքին մակերևույթների պաշտպանությունն ապահովող երեսապատման, սվաղի, ջրակայուն և ջերմակայուն խառնուրդներով ներկերի կիրառում.

-էներգաարդյունավետ պատուհանների և մուտքի դռների կիրառում.

-բացվածքների, արտաքին պատերի և ծածկերի տարրերի կցորդումների քփացում.

-սերտիֆիկացված ջերմամեկուսիչ շինարարական նյութերի օգտագործում.

-էներգախնայող ջեռուցման, օդափոխության, օդի լավորակման, տաք ջրամատակարարման և լուսավորության համակարգերի ու սարքավորումների կիրառում:

-ծախսաարդյունավետությունը հիմնավորելու դեպքում՝ այլընտրանքային էներգետիկ համակարգերի՝ արեգակնային ջրատաքացման և ֆոտովոլտային սարքավորումների ու ջերմային պոմպերի կիրառում:

Որոշմամբ սահմանվել է նաև, որ այդ պահանջները ենթակա են կիրառման օբյեկտների նախագծման, փորձաքննության և շինարարության աշխատանքների պետական գնումների կազմակերպման գործընթացներում:

Դրա հետ մեկտեղ՝

1. Մշակվել և ընդունվել են բնակարանային ոլորտում առաջացած խնդիրների լուծմանը և կարգավորմանն ուղղված ՀՀ կառավարության թվով 6 և ՀՀ վարչապետի թվով 2 որոշումներ, որոնցից են.

- ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի N821-Ն որոշումը, որով կարգավորվել են պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնց փողոցի թիվ 6/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարանների և ավտոկայանատեղերի վաճառքի պայմանները:

- ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 9-ի N1116-Ն որոշումը, որով սահմանվել են Ծաղկահովիտ համայնքում պետական միջոցների հաշվին վերակառուցված N 5 բազմաբնակարան շենքից բնակարան ստանալու իրավունք ունեցող անձանց (ընտանիքների) խմբերը և կարգավորվել են այդ բնակարանների բաշխման և հատկացման հետ կապված հարաբերությունները:

Որոշման համաձայն շենքի 40 բնակարաններից բաշխվել են 15-ը, առկա են ազատ՝ չբաշխված 25 բնակարաններ:

- ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի N1151-Ն որոշումը, որով կարգավորվել են Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրները բնակարանների գնման վկայագրերի տրամադրմամբ լուծելու հետ կապված հարցերը և այդ նպատակով ՀՀ Շիրակի մարզպետարանին է հատկացվել 1.5 մլրդ դրամ:

2. Շարունակվել են ինչպես երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցողների ցուցակներում հաշվառված անձանց և դատական կարգով իրենց բնակապահովման իրավունքը վերականգնած անձանց ծրագրի շահառու ճանաչելու, այնպես էլ բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) նվիրատվության (անհատույց մասնավորեցման) պայմանագրերի կնքման գործընթացները:

3. Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության խորացման ուղղությամբ շարունակվել են միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող՝ շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերին աջակցության աշխատանքները:

Մասնավորապես.

- ՎՋԵԲ-ի հետ համագործակցության շրջանակներում պայմանավորվածություն է ձեռք բերվել իրականացնել շենքերում էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված օրենսդրական և նորմատիվային դաշտի բարեփոխումների ծրագիր, որի մեկնարկը նախատեսվում է 2015 թվականի երկրորդ եռամսյակում:

աշխատանքներ են տարվել Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Հայաստան հիմնադրամի հետ համագործակցության համաձայնագրի նախապատրաստման ուղղությամբ:

III. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

1. ՀՀ Նախագահի 2008 թ. հուլիսի 30-ի թիվ 128-Ա կարգադրությամբ հաստատված ժամանակացույցի և 2012 թվականի ապրիլի 7-ից մայիսի 3-ը և 2013 թվականի հունվարի 21-ից փետրվարի 16-ը ՀՀ մարզերի տարբեր համայնքներ կատարած այցերի ընթացքում արձարծված առաջնահերթ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների համաձայն՝ հավաքագրվել են տեղեկատվություններ, մշակվել, ամփոփվել և ներկայացվել են ՀՀ կառավարության, ՀՀ նախագահի աշխատակազմ և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

2. Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի

Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: **Նախագծով՝ գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի մեջ կատարվել է լրացում՝ չնախատեսված աշխատանքների ծախսերի տոկոսային չափաբաժին նախատեսելով արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքների համար:**

3. Սահմանված ժամանակաընթացքում շահագրգիռ նախարարությունների, գերատեսչությունների և ՀՀ մարզպետարանների հետ համատեղ քննարկվել և իրականացվել են ՀՀ 2015-2017 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի /ՄԺԾԾ/ և ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքները և սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

4. ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվորթյամբ կառուցման և վերակառուցման աշխատանքների կատարման համար ՀՀ 2014թ տարեկան ճշտված բյուջեով նախատեսվել է 7730327.8 հազ.դրամ գումար, որից

- ֆինանսավորվել են շուրջ 6577.400.0 հազ.դրամի շինաշխատանքներ,
- չի իրացվել 789928.95 հազ.դրամ գումարով <Այլ կրթական օբյեկտների հիմնանորոգում> ծրագիրը ՀՀ կառավարության կողմից վերաբաշխելու արդյունքում,
- չի իրացվել ևս 369.396.0 հազ.դրամ գումար, ինչը պայմանավորված է գնման գործընթացների և ծավալային ճշգրտումների արդյունքներով տնտեսված միջոցների առկայությամբ

Ընդհանուր ֆինանսավորված ծրագրերի արժեքը **6577400.0** հազ.դրամ, որից՝

- **Մշակութային օբյեկտների** շինարարությունը՝ **256000.0** հազ.դրամ
- **Կրթական օբյեկտների** շինարարությունը և հիմնանորոգումը՝ **4227675.0** հազ.դրամ (80.6%)
- **Մարզական օբյեկտների** շինարարություն և հիմնանորոգում՝ **850000.0** հազ.դրամ
- Մասնագիտական կրթություն և ուսուցում (**ՄԿՈՒ**)՝ **1133888.1** հազ.դրամ
- **ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ՝ 109820.93** հազ.դրամ՝ (այդ թվում Հատուկ քննչականի նախագիծ, Դպրոցական գույք, Մշակութային օբյեկտների մասնակի նորոգում)
- Բյուջետային տարվա չորրորդ եռամսյակում ՀՀ կառավարության **18.09.2014թ թիվ 1045-Ն որոշմամբ իրականացվել է բյուջեի վերաբաշխում**, ինչի արդյունքում ավելի քան **800000.0** հազ.դրամ ուղղվել է Աղետի գոտի, ևս **600000.0** հազ.դրամ Վանաձորի բժշկական կենտրոնի շինարարությանը
- Բյուջետային տարվա ընթացքում իրականացվել են նաև շուրջ **4590000.0** հազ.դրամի ՀՀ կառավարության 2012թ հուլիսի 19-ի թիվ 916-Ա որոշմամբ նախատեսված Երևանի **Վ. Սարգսյան 3 հասցեում գտնվող վարչական համալիրի** կառուցման աշխատանքներ:

IV. ԻՆՑԵՆԵՐԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏ

1. Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննություններ ու անձնագրավորում (վկայագրավորում) իրականացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի հոկտեմբերի 30-ի N 346 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

2. Հավաքագրվել, վերլուծվել և համակարգչային ծրագիր են մուտքագրվել 2000 բնակելի և հասարակական նշանակության շենքերի վերաբերյալ անձնագրային տեխնիկական

տվյալներ: Սկսած 2012 թվականից արդեն մուտքագրվել են 5520 շենքերի վերաբերյալ տվյալներ:

3. Սահմանված կարգով գործողության մեջ են դրվել 9 շինարարական նորմեր:

4. ԱՊՀ համագործակցության շրջանակներում իրականացվել է 206 միջպետական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի նախագծերի հանրապետությունում փորձաքննության անցկացման գործընթացը, որից 15-ը սահմանված կարգով գործողության մեջ են դրվել:

5. Մասնակցություն է ցուցաբերվել շինարարությունում ստանդարտացման, տեխնիկական նորմավորման և համապատասխանության գնահատման միջպետական գիտատեխնիկական հանձնաժողովի /ՄՆՏԿՍ/ միջպետական ստանդարտների մշակման 2015-2017թթ. ծրագրի կազմման գործընթացին:

6. ՀՀ 2014թ. ստանդարտացման ծրագրով նախատեսված եվրոպական ստանդարտներին /ԵՄ/ ներդաշնակ՝ գործողության մեջ են դրվել որպես ազգային «ՀՍ ԵՆ» 9 ստանդարտներ:

7. Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ) և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից «Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարում» ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով մասնակցություն է ցուցաբերվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 20-ի N 941-Ա հրամանով ստեղծված աշխատանքային խմբի աշխատանքներին:

V. ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

1. ապահովել է նախարարության ներգրավվածությունը ՀՀ Նախագահի գլխավոր ռազմական տեսչության կողմից անցկացված ՀՀ Սյունիքի մարզի տեսչական ստուգումներին,

2. ապահովել է նախարարության մասնակցությունը ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպված «Կառավարական տուն 3-ում խոշոր հրդեհի առաջացման դեպքում աշխատակիցների պաշտպանության միջոցառումների իրականացում» թեմայով օբյեկտային վարժանքին,

3. մասնակցել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպված «Հայկական ստոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային ընդհանուր վթարի դեպքում արձագանքման կազմակերպումը և իրականացումը» թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժությանը,

4. մասնակցել է նախարարության քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում գործող պլանի համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպված բոլոր հրամանատարաշտաբային ուսումնավարժություններին ու հավաքներին, որոնց ամփոփման ժամանակ ստացել ենք դրական գնահատականներ և գրավոր շնորհակալագրեր,

5. ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ անց է կացրել առանձնացված շտաբային մարզումներ, այդ թվում ՀՀ Վայոց Ձորի մարզում,

6. մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության վարչական համալիրում կազմակերպված ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների, մարզպետարանների պաշտոնատար անձանց հավաք-պարապմունքներին:

Նախարարության աշխատակազմի գործառույթներ

Նախարարության աշխատակազմի կողմից իրականացվել է նաև ՀՀ 2015-2017թթ. ՄԺԾԾ և ՀՀ 2015թ պետական բյուջեի նախագծի մշակման և սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման աշխատանքները:

Իրականացվել է ՀՀ նախարարություններից, գերատեսչություններից և այլ կազմակերպություններից ստացված իրավական ակտերի, նորմատիվատեխնիկական և ծրագրային փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ կարծիքների և եզրակացությունների տրամադրումը:

Կազմակերպել և անցկացրել է նախարարի, նախարարի տեղակալների, նախարարության աշխատակազմի ղեկավարի, նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների և այլ պաշտոնատար անձանց մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ, ճեպագրույցներ: Ապահովել է նախարարության պաշտոնատար անձանց ու զանգվածային լրատվության միջոցների միջև համագործակցությունը:

Սահմանված կարգով կազմակերպել և անցկացրել է քաղաքացիների գրանցումն ու ընդունելիությունը նախարարության պաշտոնատար անձանց մոտ, լրագրողների հավատարմագրումը:

Նախարարության գործունեության ոլորտին առնչվող հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ պատրաստել է մամուլի հաղորդագրություններ, մամուլի տեսություն: Կազմակերպել է նախարարության գործունեության մասին հանրության իրազեկումը՝ մամուլի հաղորդագրությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, տեսաֆոտո նյութերի և այլ տեղեկատվական նյութեր պատրաստելու և տարածելու միջոցով:

Համակարգել է նախարարության պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկման աշխատանքները: Վերահսկել է կայքէջում նյութերի համալրման, թարմացման և փոփոխման գործընթացը:

Համաձայն ՀՀ Նախագահի 2014 թվականի ապրիլի 30-ի ՆՀ-97-Ն հրամանագրի 2-րդ կետի ՀՀ կառավարությանն առընթեր ճարտարապետության պետական կոմիտեն վերակազմակերպվել և միացվել է ՀՀ քաղաքաշինության նախարարությանը, որի արդյունքում ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 4-ի թիվ 577-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ քաղաքաշինության նախարարության կանոնադրությունում և կառուցվածքում, ինչպես նաև փոփոխություններ են կատարվել ՀՀ վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի N 620 որոշման մեջ, որի արդյունքում նախարարության հաստիքները ավելացել են 25 միավորով: Դրա հետ կապված համապատասխան առաջարկություն է ներկայացվել ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության նոր պաշտոններ ստեղծելու վերաբերյալ:

Նախապատրաստվել և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնեցմանն է ներկայացվել քաղաքացիական ծառայության 36 պաշտոնի անձնագրի նախագիծ, որոնք սահմանված կարգով հաստատվել են:

2014 թվականի ընթացքում աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 48 մրցույթ, որից 30-ը անցկացվել է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդում, իսկ 18-ը՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմում: Իրականացվել է աշխատակազմի առաջատար թափուր

պաշտոններ զբաղեցնելու համար դիմած 47 դիմորդների փաստաթղթերի ընդունման, մրցութային փաթեթների կազմման և մրցույթների նախապատրաստման ու անցկացման աշխատանքները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է քաղաքացիական ծառայողների վերապատրաստման և ատեստավորման կազմակերպման աշխատանքները: 2014 թվականի ընթացքում 28 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են, իսկ 30 քաղաքացիական ծառայողներ ատեստավորվել, որիոնցից 1-ը չի համապատասխանել զբաղեցրած պաշտոնին:

Նախարարության աշխատողների ընդհանուր թվաքանակը կազմում է 213, այդ թվում՝ նախարարի աշխատակազմ – 22 աշխատող, նախարարության աշխատակազմ – 191 աշխատող, որից 184-ը քաղ. ծառայող: ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ը ունի 31 աշխատակից: «Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ – 25 աշխատակից: «Ալ. Թամանյանի անվան թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ – 8 աշխատակից:

Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ նախարարություն է մուտքագրվել 12007 գրություն, ելք է արվել 6887 գրություն:

Հաշվետու ժամանակահատվածում ձևակերպվել է նախարարի կողմից ստորագրված 334, աշխատակազմի ղեկավարի կողմից ստորագրված 57 հրաման:

Նախարարությունում քննարկվել է քաղաքացիների թվով 686 դիմում, որից 368-ը՝ բնակարանային, 131-ը՝ շինարարական, 71-ը՝ աշխատանքային, 10-ը՝ կենսաթոշակային, 16-ն՝ օրենսդրական և 5-ը՝ կոմունալ-կենցաղային բնույթի:

ՀՀ կառավարություն է ներկայացվել 75 որոշման նախագիծ, որից 47-ն ընդունվել է որպես ՀՀ կառավարության որոշում, իսկ 28-ը՝ ՀՀ վարչապետի որոշում: